ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի ինն ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 21,398.3 մլն դրամ՝ պլանավորված 14,700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 45.6 տոկոսով կամ 6,698.3 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 47.4 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 19,317.6 մլն դրամ:

Սեպտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,951.3 մլն դրամ՝ պլանավորված 2,200.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 34.2 տոկոսով կամ 751.3 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 83, լուծարվել՝ 9 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 3 լուծարային ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ չեն հայտնաբերվել:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 97 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 30-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 28-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 23-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության, 7-ական՝ լուծարային և ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 2 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6,311 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6,159:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 57 պայմանագրեր:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 65.5 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում կատարվել է վերադարձ 7 վարձու աշխատողի՝ 2.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 2 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2021 թվականի օգոստոս ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 9,821.9 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից պակաս է 4,715.3 մլն դրամով կամ 32.4 տոկոսով: Նույն ժամանակահատվածում արտահանվել են 3,620.7 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7,769.2 մլն դրամի դիմաց կամ պակաս 53.4 տոկոսով:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 35 տեղեկանքներ, մերժվել՝ 10 դիմում:

ԱՀ ՊԵԿ նախագահի կողմից ընդունվել են «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևը ու դրա լրացման կարգը սահմանելու մասին», «Հարկ վճարողների և ֆիզիկական անձանց չկատարած պարտավորությունների հարկադիր գանձման ոլորտում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կանոնակարգման մասին»

հրամանները, փոփոխություններ կատարվել ««Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի կիրարկման հետ կապված հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մասին», «Հարկային մարմնի ներքին փաստաթղթաշրջանառության կանոնակարգման մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության տեսչության կողմից կիրառվող կապարակնիքի և կապարակնիք-ժապավենի ձևերը հաստատելու մասին» հրամաններում:

ԱՀ ՊԵԿ նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N 226-ն հրամանի համաձայն՝ սեպտեմբերի 24-ն կոմիտեում կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում ու Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում հարկային մարմնին վերաբերող դրույթների մասով կատարված փոփոխություններ» թեմայով, որի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են վարչական վարույթի հարուցման հիմքերը և կարգը, վարույթի փուլերը, ժամկետները, վարույթի կասեցման և կարճման հիմքերն ու կարգը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով հարկային մարմնի քննությանը ենթակա հոդվածներն ու իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում կոմիտեի երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հասարակայնության հետ կապ

2021 թվականի 3-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 803 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, հրապարակվել հարկ վճարողների կողմից օգոստոս-սեպտեմբեր ամիսներին առավել հաճախ բարձրացված հարցերի պատասխան-պարզաբանումները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներով հեռարձակվել է հարկ վճարողների շրջանում հարկային կարգապահության բարձրացմանն ուղղված գովազդային հոլովակ:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 407, ելքագրվել՝ 282 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն: